ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» նոյեմբերի 2021 թվականի N 210

ԵՆՈՎԱ ԲՈՒԼՂԱՐՅԱՆ ՍՈԿՐԱՏՈՒՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի N61-Ն որոշման հավելված 1-ի բ ենթակետով, հիմք ընդունելով Ենովա Բուլղարյան Սոկրատուս Հարությունի դիմումը՝

Որոշում եմ

1. Ենովա Բուլղարյան Սոկրատուս Հարությունին, Դսեղ համայնքի 47փ. 9տ. հասցեում բնակելի տուն կառուցելու նպատակով տալ շինարարության թույլտվություն:

2. Ենովա Բուլղարյան Սոկրատուս Հարությունին, ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքապետարանի 900265129289 հաշվեհամարին մուծել 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարական թույլտվության համար:

3. Ենովա Բուլղարյան Սոկրատուս Հարությունին պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19-ին

գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, □ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2021 թվականի N 211

ՏԱՐՈՆ ՎԱՉԱԳԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Դսեղ համայնքի հողամասը աճուրդով վաճառելու մասին 20.11.2021թ. թվականի թիվ 1-1 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դսեղ համայնքում 20.11.2021 թվականին անցկացված աճուրդում հաղթող ճանաչված Տարոն Վաչագանի Թումանյանին օտարել լոտ 1. 06-035-0197-0002 ծածկագրով 0,156386 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը, աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 127 000 /մեկ հարյուր քսանյոթ հազար/ ՀՀ դրամով:

2. Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո, Տարոն Վաչագանի Թումանյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Տարոն Վաչագանի Թումանյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

2021թ նոյեմբերի 20-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2021 թվականի N 212

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով 2016թ. նոյեմբերի 21-ին ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելու փաստը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի նոյեմբերի 22-ից դադարեցնել համայնքի ղեկավարի լիազորությունները:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ օրենքով սահմանված կարգով հաշվել և վճարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՌՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

2021թ նոյեմբերի 22-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2021 թվականի N 213

ԳՆԵԼ ԳԱԳԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով 2021թ ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. նոյեմբերի 17-ի թիվ 738-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի նոյեմբերի 22-ից ստանձնել համայնքի ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունները:

2. Պաշտոնային դրույքաչափը սահմանել համաձայն ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

2021թ նոյեմբերի 22-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղհամայնք, ✉ 1718, Հրապարակ 1,
հեռ.(098)01-60-90,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2021 թվականի N 214

ԱՆԱՍՆԱԳՈՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1326883 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 02/02/2002թ. թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 15.11.2005թ. թիվ 2248-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 19.03.2015թ, թիվ 596-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դսեղ համայնքի 18փ. 7տ. հասցեում գտնվող 06-035-022-000033 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի կառուցապատման 0,061 հա հողամասի վրա գտնվող անասնագոմ շինության գործառնական նշանակությունը օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել որպես բնակավայրերի կառուցապատման բնակելի տուն գործառնական նշանակության: Շինության փոփոխությունը կատարել առանց քաղաքաշինական փաստաթղթերի, քանի որ շինարարական աշխատանքներ չեն կատարվել:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում կատարելուց հետո ընդգրկել համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24-ին
գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2021 թվականի N 215

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-035-0022-0033 ծածկագրի, Արշալույս Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող 0,061 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրվել է 18-րդ փողոց 7 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

2021թ. նոյեմբերի 24-ին

գ. Դսեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղհամայնք, ✉ 1718, Հրապարակ 1,
հեռ.(098)01-60-90,էլ.փոստ`dsegh.tim@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» նոյեմբերի 2021 թվականի N 216

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0148-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Վարդանյանի դիմումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-035-0183-0004 ծածկագրի տակ գտնվող 0,494636 հա խոտհարքի, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, նկատմամբ Վահրամ Ռազմիկի Վարդանյանի /ծնված՝1970թ/, սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներիում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Գ. ՔՈՉԱՐՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 26-ին
գ. Դսեղ